# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

0010 ք. Երևան, Կորյունի 17

N - Ն-7235

«19» հոկտեմբերի 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

***Հարգելի՛ պարոն Միրզոյան,***

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 166-րդ հոդվածի 3-րդ մասի և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 143-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորի թափուր տեղում ընտրելու համար առաջարկվում են Բարձրագույն դատական խորհրդի կողմից ընտրված՝ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի նախագահ Արսեն Սամվելի Մկրտչյանի, Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի նախագահ Սամվել Լևոնի Գրիգորյանի, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արմեն Մերուժանի Հայկյանցի թեկնածությունները:

Կից ներկայացվում են Ա. Մկրտչյանի, Ս. Գրիգորյանի և Ա. Հայկյանցի վերաբերյալ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 134-րդ հոդվածի 6-րդ մասով, 143-րդ հոդվածի 3-րդ մասով և Ազգային ժողովի աշխատակարգով սահմանված փաստաթղթերի պատճենները:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորի թեկնածուներին Ազգային ժողովում կներկայացնի Բարձրագույն դատական խորհրդի նախագահը:

Առդիր՝ 113 էջ:

**Հարգանքով՝**

**Ռ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ**

## ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-66-Ո-152

2020թ.

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԴԱՏԱՎՈՐ ՆՇԱՆԱԿՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԽԱՂԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ԿԱԶՄԵԼՈՒ, ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

2020 թվականի հոկտեմբերի 15-ին, դռնփակ նիստում, քննարկելով Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակը կազմելու, հաստատելու և Ազգային ժողովին առաջարկություն ներկայացնելու վերաբերյալ հարցը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով, 133-րդ հոդվածի 10-րդ մասով՝ Բարձրագույն դատական խորհուրդը

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Կազմել և հաստատել Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակը՝ համաձայն հավելվածի:
2. Ազգային ժողովին առաջարկել սույն որոշմամբ հաստատված անձանց թեկնածությունները՝ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորի թափուր պաշտոնում ընտրելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ — Ռ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

2020թ. հոկտեմբերի 15
ք. Երևան

Հավելված
Բարձրագույն դատական խորհրդի
2020թ. հոկտեմբերի 15-ի թիվ ԲԴԽ-66-Ո-152
որոշման

# ՑՈՒՑԱԿ

## ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԴԱՏԱՎՈՐ ՆՇԱՆԱԿՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԽԱՂԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ

| N | ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ | ԾՆՆԴՅԱՆ ԹԻՎ, ԾՆՆԴԱՎԱՅՐ | ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ | ՊԱՇՏՈՆ |
|---|---|---|---|---|
| 1. | ԳՐԻԳՈՐՅԱՆ Սամվել Լևոնի | 1974թ. Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն | Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան | Նախագահ |
| 2. | ՀԱՅԿՅԱՆՑ Արմեն Մերուժանի | 1973թ. Գեղարքունիքի մարզ, գ. Զորագյուղ | Բարձրագույն դատական խորհուրդ | Խորհրդի անդամի ժամանակավոր պաշտոնակատար |
| 3. | ՄԿՐՏՉՅԱՆ Արսեն Սամվելի | 1973թ. ք. Երևան | Վերաքննիչ քաղաքացիական դատարան | Նախագահ |

# Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակարգը հաստատելու մասին» ՀՀ Ազգային ժողովի որոշման 95-րդ մասի 4-րդ կետով՝ տալիս եմ իմ գրավոր համաձայնությունը՝ Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորի թափուր պաշտոնում ընտրվելու վերաբերյալ:

**Հարգանքով՝**

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ՝

ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

16.10.2020թ.



# ՏԵՂԵԿԱՆՔ

| | |
|---|---|
| Ազգանուն, անուն, հայրանուն | Գրիգորյան Սամվել Լևոնի |
| Ծննդյան տարեթիվը, ծննդավայրը | 06.01.1974թ., ՀՀ Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն |
| Կրթությունը, ինչ է ավարտել և երբ | Բարձրագույն, Հ. Աճառյանի անվան համալսարանի իրավագիտության ֆակուլտետ՝ 1996թ., 2005թ. ստացել է պետական նմուշի դիպլոմ |
| Մասնագիտությունը | Իրավագիտություն |
| Մասնագիտական ստաժը | 21 տարի |
| Դատավորի ստաժը | 14 տարի |
| Աշխատանքի վայրը | Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան |
| Զբաղեցրած պաշտոնը | Դատարանի նախագահ |
| Ընտանեկան դրությունը | Ամուսնացած |
| Քանի երեխա ունի | 3 երեխա |

## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

| | |
|---|---|
| 05.08.1996-11.01.1999թթ. | Աբովյան քաղաքի ժողդատարան, նախ՝ գրասենյակի գործավար, ապա՝ գրասենյակի քարտուղար |
| 08.01.1999-12.02.2003թթ. | Կոտայքի մարզի ԴԱՀԿ ծառայություն, նախ՝ հարկադիր կատարող, ապա՝ ծառայության պետի տեղակալ |
| 12.02.2003-04.05.2005թթ. | Արմավիրի մարզի ԴԱՀԿ ծառայության պետ |
| 04.05.2005-01.06.2006թթ. | ԴԱՀԿ ծառայություն, նախ՝ վերահսկողության բաժնի պետ, ապա՝ օրենսդրության կատարելագործման և |

վերահսկողության վարչության պետ

| | |
|---|---|
| 01.06.2006-2008թթ. | Տնտեսական դատարանի դատավոր |
| 2008թ. – 07.2018թ. | Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի նախագահ |
| 07.2018թ. – առ այսօր | Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի նախագահ |
| 17.09.2016թ. | Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով պարգևատրվել է Մխիթար Գոշի մեդալով |
| 29.08.2020թ. | Արցախի Հանրապետության Նախագահի հրամանագրով պարգևատրվել է Մխիթար Գոշի մեդալով |
| 01.10.2020թ. | Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի կողմից տրվել է շնորհակալագիր՝ Արցախի և Արցախցիների թիկունքը ամուր պահելու, առաջնագծում կանգնած զինվորների պարենային անվտանգությունը ապահովելու համար: |

«16» հոկտեմբերի 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

# Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը

## ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սահմանադրության 139-րդ հոդվածի 1-ին և 166-րդ հոդվածի 7-րդ մասերը, ինչպես նաև Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի հունիսի 14-ի ԲԴԽ-16-Ո-31 որոշմամբ ներկայացված առաջարկությունը.

Սամվել ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ նշանակել Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի նախագահ՝ երեք տարի ժամկետով:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ — Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

2018թ. հուլիսի 4
Երևան
ՆՀ-359-Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
# Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ, ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐ ԵՎ ԴԱՏԱՎՈՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 11-րդ կետով և հիմք ընդունելով Արդարադատության խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 27-ի որոշումները և եզրակացությունները՝ ո ր ո շ ու մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորներ նշանակել՝

1) Երվանդ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի դատավորի լիազորությունները.

2) Ստեփան ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի առաջին ատյանի դատարանի դատավորի լիազորությունները.

3) Կարեն ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի դատավորի լիազորությունները.

4) Տարոն ՆԱԶԱՐՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի դատավորի լիազորությունները.

5) Նախշուն ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի դատավորի լիազորությունները.

6) Վահագն ԹՈՐՈՍՅԱՆԻՆ:

2. Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի դատավորներ նշանակել՝

1) Համլետ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորի լիազորությունները.

2) Ռազմիկ ԱԶԱՐՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի նախագահի լիազորությունները.

3) Մարգո ՍԻՄՈՆՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորի լիազորությունները:



3. Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների նախագահներ նշանակել.

1) Արման ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ՝ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի նախագահ՝ դադարեցնելով նրա Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի դատավորի լիազորությունները.

2) Սամվել ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ՝ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի նախագահ՝ դադարեցնելով նրա Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի դատավորի լիազորությունները.

3) Վարդան ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ՝ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի նախագահ:

4. Սուրիկ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ նշանակել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր՝ դադարեցնելով նրա Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի դատավորի լիազորությունները:

5. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում 2008 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

2007թ. նոյեմբերի 30
Երևան
ՆՀ-274-Ա

ԱՄՍԻ 03.12.07
ԹԻՎ N 1322

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
# Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐ ԵՎ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 11-րդ կետով և հիմք ընդունելով Արդարադատության խորհրդի 2006 թվականի մայիսի 24-ի որոշումներն ու եզրակացությունները՝ ո ր ո շ ու մ ե մ.

Սամվել ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ նշանակել Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի անվճարունակության մասին գործեր քննող դատավոր:

Տարոն ՆԱԶԱՐՅԱՆԻՆ նշանակել Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի դատավոր:

Վլադիմիր ԱՍԼԱՆՅԱՆԻՆ նշանակել Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի դատավոր՝ դադարեցնելով նրա՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի նախագահի լիազորությունները:

Գագիկ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ նշանակել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի նախագահ՝ դադարեցնելով նրա՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի անվճարունակության մասին գործեր քննող դատավորի լիազորությունները:

Արթուր ՕՀԱՆՅԱՆԻՆ նշանակել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի նախագահ՝ դադարեցնելով նրա՝ Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի նախագահի լիազորությունները:

Սուրիկ ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ նշանակել Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի նախագահ՝ դադարեցնելով նրա՝ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի նախագահի լիազորությունները:

Արա ԿՈՒԲԱՆՅԱՆԻՆ նշանակել Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի դատավոր՝ դադարեցնելով նրա՝ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի դատավորի լիազորությունները:

Մասիս ՌԵՀԱՆՅԱՆԻՆ նշանակել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի դատավոր՝ դադարեցնելով նրա՝ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի դատավորի լիազորությունները:

Վարդան ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ նշանակել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի դատավոր՝ դադարեցնելով նրա՝ Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի դատավորի լիազորությունները:

Հրաչյա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ նշանակել Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի առաջին ատյանի դատարանի դատավոր՝ դադարեցնելով նրա՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի դատավորի լիազորությունները:

Գոռ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ նշանակել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի դատավոր՝ դադարեցնելով նրա՝ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի դատավորի լիազորությունները:

Սարիբեկ ԱՐԱՄՅԱՆԻՆ նշանակել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի դատավոր՝ դադարեցնելով նրա՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի դատավորի լիազորությունները:

Արշակ ՇԱՀՈՅԱՆԻՆ նշանակել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր՝ դադարեցնելով նրա՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի դատավորի լիազորությունները:

Ալեքսանդր ԱԶԱՐՅԱՆԻՆ նշանակել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի դատավոր:

Սամվել ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ նշանակել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի դատավոր:

Ռաֆիկ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ նշանակել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր:

Հարություն ԵՆՈՔՅԱՆԻՆ նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր:

Հովհաննես ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

2006թ. հունիսի 1
Երևան
ՆՀ-124-Ա